«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտոր,
հ.գ.թ., դոցենտ

Մ. Մուրադյան

«__» _____ 2026 թ.

ԿԱՐԾԻՔ

Առաջատար կազմակերպության՝ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի՝ Ռոզա Աշոտի Աբրահամյանի՝ «Ազատազրկում պատժատեսակի կատարման տարբերակման և անհատականացման իրավական երաշխիքները» թեմայով ԺԲ.00.05 – «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման քրեական իրավունքի և քրեական դատավարության ամբիոնը՝ մասնակցությամբ իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա.Ռ. Հովհաննիսյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Գ.Թ. Գրիգորյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Դ.Ա. Թումասյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Մ.Մ. Մարկոսյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ.Մ. Խաչատրյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա.Պ. Ղուկասյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Ա.Ա. Լազարյանի քննարկեց Ռոզա Աշոտի Աբրահամյանի՝ «Ազատազրկում պատժատեսակի կատարման տարբերակման և անհատականացման իրավական երաշխիքները» թեմայով ԺԲ.00.05 – «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը և հանգեց ներքոթվարկյալ հետևություններին:

Ռ. Աբրահամյանի ատենախոսության թեմայի արդիականությունը կասկած չի հարուցում և պայմանավորված է հետևյալ հանգամանքներով: Քրեակատարողական իրավահարաբերությունները, ծագելով մեղադրական դատավճռի կամ քրեաիրավական ներգործության այլ միջոցների կիրառման մասին դատական ակտի

օրինական ուժի մեջ մտնելու պահից, շարունակվում են պատիժը կատարելու կամ քրեաիրավական ներգործության այլ միջոցը կիրառելու ողջ ընթացքում և դադարում՝ պատիժը կամ քրեաիրավական ներգործության այլ միջոցը կատարելով կամ կիրառելով՝ ողջ ընթացքում պահանջելով քրեակատարողական սկզբունքներով առաջնորդվելու նախապայմանը:

Հետևաբար, պատիժների կատարման և քրեաիրավական ներգործության այլ միջոցների կիրառման ընթացքում դատապարտյալի իրավահպատակ վարքագիծը խթանելու նպատակով դրանց կատարման ու կիրառման անհատականացված և տարբերակված լինելը ծայրահեղ պարտադիր է, ինչին մանրամասն անդրադարձել է ատենախոսն իր աշխատանքում:

Ատենախոսության թեմայի արդիականության մասին են վկայում նաև սույն հիմնախնդրին վերաբերող տեղեկությունների նախատեսումը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ քրեակատարողական հիմնարկներում քրեական ենթամշակույթի դեմ պայքարին նվիրված արտահերթ հրապարակային զեկույցում, առաջատար գիտնականների անդրադարձը պատիժների կատարման և քրեաիրավական ներգործության այլ միջոցների կիրառման տարբերակման և անհատականացման սկզբունքի տարբեր բաղկացուցիչներին ու դրանց մեկնաբանումը տարբեր տեսանկյուններից:

Իրականացված հետազոտությունն ընդգրկել է ծավալուն առարկա՝ ազատազրկում պատժատեսակի կատարման տարբերակման և անհատականացման իրավական երաշխիքները կարգավորող ներպետական և օտարերկրյա իրավական նորմերը, իրավակիրառ պրակտիկան, միջազգային փորձն ու հայրենական և արտասահմանյան հեղինակների մեկնաբանություններ ու տեսական աղբյուրները:

Աշխատանքի գլուխներում ատենախոսը մանրամասն հետազոտել է առարկայի՝ վերը նշված տարրերը:

Ատենախոսության ուսումնասիրությունը հիմք է տալիս պնդելու, որ ատենախոսը հաջողությամբ լուծել է հետազոտության խնդիրները, ինչի շնորհիվ իրականացվել է հետազոտության նպատակը, այն է՝ վեր հանել պատիժների կատարման տարբերակման ու անհատականացման սկզբունքների օրենսդրական իրացման երաշխիքների ու կենսագործման կառուցակարգերի գործող համակարգը, գնահատել դրանց շրջանակի բավարարության աստիճանը, բացահայտել առկա թերությունները

և այդ հիմքով մշակել դրանց կատարելագործման կոնկրետ առաջարկներ, և ուսումնասիրել պատիժների տարբերակման ու անհատականացման որպես քրեակատարողական իրավունքի սկզբունքների տեսակային հիմնահարցերը (ներառյալ դրանց բովանդակության, հասկացության, հարաբերակցության) և ստացված եզրակացությունները համադրել այդ սկզբունքների օրենսդրական կարգավորման տեսլականի հետ, արդյունքում մշակելով գործող ՀՀ քրեակատարողական օրենսգրքով այդ հարաբերությունները կարգավորելու առաջարկներ:

Հետազոտության գիտական նորույթը հիմնավորվում է այն հանգամանքով, որ ներկայացված ատենախոսությունը հայրենական իրավագիտության շրջանակներում առաջին համապարփակ և ամբողջական գիտահետազոտական ուսումնասիրությունն է, որտեղ հնարավորինս համալիր, բազմակողմանի քննարկվել ու վերլուծվել են պատիժների կատարման և քրեաիրավական ներգործության այլ միջոցների կիրառման տարբերակման և անհատականացման սկզբունքի տեսական և գործնական հիմնախնդիրները, մասնավորապես՝ ազատազրկում պատժատեսակի կատարման տարբերակման և անհատականացման իրավական երաշխիքների համատեքստում:

Հետազոտության գիտական նորույթն ապահովվել է նաև ատենախոսի կողմից պաշտպանության ներկայացվող դրույթներով:

Ատենախոսի տեսական դատողությունների և եզրահանգումների հիմնավորվածությունն ապահովվել է պատշաճ մեթոդաբանական բազայով, գրականության աղբյուրներով, իրավական և փորձառական հիմքով, ներառյալ՝ դատապարտյալների և քրեակատարողական ծառայողների շրջանում կատարված սոցիոլոգիական ուսումնասիրության արդյունքները:

Ատենախոսության սեղմագիրը և հրատարակված հոդվածներն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները և չեն հակասում դրանց:

Միևնույն ժամանակ, անհրաժեշտ ենք համարում սույն հետազոտության վերաբերությամբ ներկայացնել որոշ նկատառումներ.

1. Սեղմագրի 3-րդ էջի երկրորդ և չորրորդ պարբերություններում, ատենախոսության 4-րդ էջի երկրորդ պարբերությունում և այլուր ատենախոսը կիրառում է «քրեական պատիժ» եզրույթը, որը խնդրահարույց է՝ հաշվի առնելով, որ

պատժի ինստիտուտը նախատեսված է բացառապես ՀՀ քրեական օրենսգրքով և իրավական համակարգում այլ պատիժ առհասարակ գոյություն չունի: Հետևաբար, այդ ձևակերպման մեջ «քրեական» բառի կիրառումն ավելորդ է:

2. Պաշտպանության ներկայացվող 9-րդ հիմնադրույթում ատենախոսը ներկայացնում է, որ ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը, պահպանելով որոշ ինստիտուտներ, ներմուծել է նաև նորերը, մասնավորապես՝ «դատապարտյալի վարքի մշտադիտարկում», «դատապարտյալի ռիսկերի ու կարիքների գնահատում» և այլն: Սակայն, հարկ է նշել, որ «դատապարտյալի վարքի մշտադիտարկում» եզրույթը ՀՀ քրեակատարողական օրենսգրքում հիշատակվում է միայն 19-րդ հոդվածի 3-րդ մասում և առհասարակ չի հիշատակվում ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգում, ինչից ելնելով ցանկալի կլիներ որոշակի մանրամասներ նախատեսել նաև այս նոր ինստիտուտի վերաբերյալ՝ ներկայացնելով համապատասխան առաջարկություններ՝ փոխկապակցելով դա ազատազրկում պատժատեսակի կատարման տարբերակման և անհատականացման իրավական երաշխիքների հետ:

3. Ատենախոսության ներածությունում ներկայացված էմպիրիկ բազան սահմանափակվում է 2022 թ.-ով, իսկ որոշ դեպքերում՝ 2018 թ.-ով: Ցանկալի կլիներ այդ բազան համալրել առավել նոր տվյալներով: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ ատենախոսության 118-րդ էջում ներկայացվում է նաև 2022-2023 թթ.-ին, իսկ 120-րդ էջում՝ 2023 թ.-ին վերաբերող որոշակի տվյալներ:

4. Ատենախոսության 118-րդ էջում ներկայացված աղյուսակում նշված հանցագործություններում կիրառվում են ձևակերպումներ, որոնք համահունչ չեն ՀՀ օրենսդրությանը, օրինակ՝ «կանխամտածված սպանություն», «կանխամտածված ծանր մարմնական վնասվածք» և այլն: Բացի այդ, ատենախոսության աղյուսակները համարակալված չեն, ինչը խիստ ցանկալի է՝ ատենախոսության տեքստի հետ ներդաշնակությունն ապահովելու համար:

Ինչպես երևում է նշված նկատառումների բովանդակությունից, դրանք կրում են մասնավոր բնույթ և չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը ու պայմանավորված են հեղինակի հետագա աշխատանքներն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ:

Հետևություն. Ռոզա Աշոտի Աբրահամյանի՝ «Ազատազրկում պատժատեսակի կատարման տարբերակման և անհատականացման իրավական երաշխիքները» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից ներկայացվող պահանջներին, իրենից ներկայացնում է ազատազրկում պատժատեսակի կատարման տարբերակման և անհատականացման իրավական երաշխիքների վերաբերյալ համակարգված, համալիր և ավարտուն հետազոտություն, իսկ դրա հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման՝ ԺԲ.00.05 – «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ:

Ռոզա Աբրահամյանի ատենախոսության վերաբերյալ առաջատար կազմակերպության կարծիքը պատրաստվել է քրեական իրավունքի և քրեական դատավարության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Դավիթ Թումասյանի կողմից (կարծիքը քննարկվել և հավանության է արժանացել ամբիոնի՝ 2026 թ.-ի մայիսի 13-ի նիստում, արձանագրություն № 8):

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման
քրեական իրավունքի և քրեական դատավարության ամբիոնի պետ,
ի. գ. թ., դոցենտ Ա. Հովհաննիսյան

«13» 05 2026 թ.

Ա. Հովհաննիսյանի ստորագրությունը հավաստում եմ՝

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի վարչական աշխատանքների
համակարգող պրոռեկտոր Ա. Սուքիասյան